## 14 (96). ԲԱԼՔԻ ԲԱՐԻՆ ԷՍ Է

Էխտիարին մեկը ինչ վտանք օր քուքա, կըսե. «Բըլքի բարին է՛ս է»։ Էդիկ օր էդ բանը կըսե, իրեք երիտասարդ կըսեն թե.— Էս խորաթան էս մարթը միշտ կէնե, էս ի՛նչ բան է։— Փորցեն կը էդոր խորաթան։ Կէրթան կը գործ կը բռնեն, սելերը կը բառնան, էդ մարթուն հետվին ընկեր կէնեն, հետվնին տանին կը։ Կէրթան մե տեղըմ ըռաստ քուքան, մութը կընկնի, էդ ընկերտանքը կըսեն՝ «Արիք մալը թողնինք, հանքշինք[1], էնթուի գլխեն լծենք էրթանք»։ Էդ էխտիարին կըսեն՝ «Դու մալին քովը կեցի»։ Էտոնք օր կտանին մալը արծելու, իրեք ընկերը իրար հետ միշտվերը կէնեն թե՝ «Արիք էդոր մալը հոս թողնենք, մերը տանինք լծենք»։ Փերեն լծեն կը, կուզեն էրթալ, էդ մարթը կըսե.— Իմ մալըս հ՞ո՞ւր է։

Կըսեն.— Գողը տարավ։

Էս մարթը կըսե.— Բըլքի բարին է՛ս է։

Էդ մարթիքը կելլեն կէրթան։ Լուսը վառ քուքա օրա, քիչըմ առաչ քուքա, կայե օր եղները պառկել են ուրտեղ օր կարծեին։ Կէրթա փերե եզները լծե կը էտվներեն կէրթա, կէրթա ընկերտանցը հասնի կը։ Հասնի կը օրա, էդ էխտիարը կայե օր սելերը կա, մալը չկա։

Էդոնց կըսե.— Տզա՛ք, էս ձեր մալը ուրենե, իմս է ջըրջը[2] տարել էին, փերին տվին։ Էդոնք կըսեն.— Մերն է ջըրջը էկել տարել է։

— Ծո,— կըսե,— էդ մարթուն խորաթան տեղով է, էտորը մեր ծուռ կամեցողութենեն է, էդ մարթը տեղով կըսեր թե՝ «Բըլքի բարին էս է», մեր մալը իսկականեն տարան։

---

1 Հանգստանանք (Ծ. Բ.)։

2 Գելերը (Ծ. Բ.)։